ԻՐ ԳՐԵՐԻ ՀԱՆՃԱՐԵՂ ՍՏԵՂԾՈՂ

Մեսրոպ Մաշտոցի

ԾՆՆԴՅԱՆ 1600 ԱՄՅԱԿՆ Է

ՏՈՆՈՒՄ

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ստ. Ներսիսյան, Մեսրոպ Մաշտոցի դիմանկարը (1882 թ.)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1962 Общественные науки

Գուրգեն Սևակ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ՈՐՊԵՍ ԻՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԱՐՏԱՀԱՅՏԻՉ

Մեր թվականության 4-րդ դարը հայ ժողովրդի պատմական ճակատագրի տեսակետից նշանավորվեց որպես տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի հեղաբեկման փոթորկոտ ու տագնապալից շրջան՝ հագեցված մեծ խիզախումներով ու գառն ողբերգություններով, Արևելքի և Արևմուտքի երկու հզոր տերությունների՝ Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության հարձակողական ձեռնարկումները կասեցնող և երկրի ինքնուրույնությունը պահպանող միջոցների որոնման ու փորձերի մի անընդմեջ շղթա։

Տիգրան 2-րդի ստեղծած հզոր տերության վարչական ու տերիտորիալ նվաճումները դարերի ընթացքում զգալապես նվազել էին. պարսից թագավորը վերստին ետ էր իլել Տիգրանի նվաճած «արքայից արքա» տիտղոսը, հայ թագավորները խաղալիք էին դարձել Հռոմեական կայսրության և պարսից արքունիքի ձեռքին, իսկ երկրի ներսում այլևս անկարող՝ միավորելու արդեն ձևավորվող ֆեոդալական կարգերի հետևանքով ինքնիշխանության ձգտող հայ նախարարական տները։

Դարասկզբին՝ հենց 301 թվին Հայաստանը բռնեց հոգևոր հեղաբեկման ուղին՝ պաշտոնական կրոն հայտարարելով քրիստոնեությունը, որը ֆեոդալիզմի պահանջն էր և նրա պահպանման հիմնական հոգևոր գործոնը պիտի դառնար հետագա դարերում։ Այդ վճռական միջոցառումով Հայաստանը երեսը դարձրեց դեպի Արևմուտք՝ հուսալով, որ դավանակից քրիստոնյա Հռոմեական կայսրությունը իրեն դաշնակից կլինի Պարսկաստանի նվաճողական ձգտումների դեմ։ Սակայն այդ «դաշնակիցը» ուխտադրուժ դիրք բռնեց և դարավերջին չհասած թիկունքից դավաճանեց հայերին, Պարսկաստանի հետ պայմանագիր կնքելով՝ Հայաստանը բաժանեց իր և նրա միջև։

Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հայտարարելը, մյուս կողմից՝ առավել զրգռեց պարսից արքունիքին, որը կատաղությամբ էր լցված Հայաստանում դեռևս իշխող Արշակունիների հարստության, ինչպես և կաթողիկոսական աթոռը գրավող պարթևական տոհմի նկատմամբ, որ սերում էր Գրիգոր Լուսավորչից։

Ավարայրի ճակատամարտի անմահ երգիչ Եղիշեն իր ոսկեղենիկ մատյանն սկսում է հենց այդ աղետալի վիճակի նկարագրությամբ. «Երբ Արշակունյաց ցեղը վերացավ,— գրում է նա,— հայոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը, որն իր իշխանությունը վարում էր մոգերի օրենքով և բազմաթիվ անգամներ մարտնչում էր նրա՛նց դեմ, ով չէր ընդունում նրանց կրոնը. սկսելով Տիրանի որդի Արշակ թագավորի օրերից՝ կռվում էր մինչև Վռամշապուհի որդի հայոց Արտաշես թագավորի 6-րդ տարին... (Պարսից Հազկերտ արքային) սատանան դարձրեց իր գործակիցը և կուտակված ամբողջ թույնը դուրս թափեց և նրան լցրեց ինչպես թունավոր նետերով լի կապարճ... Քանի որ նրան շատ սիրելի

էին խոովությունն ու արյունահեղությունը, դրա համար էլ նա ինքն իր մեջ ալեկոծվում էր, թե ո՞ւմ վրա թափի դառն թույները կամ ո՞ւր արձակի բազմաթիվ նետերը։

Այս ասված է Հազկերտ 2-րդի մասին, բայց վերաբերում է և նրա նախորդներին, սկսած Շապուհ 2-րդից (310—379 թթ.), որը ինչպես հայտնի է, 367 թվին խարեությամբ իր մոտ հրավիրեց Արշակ 2-րդին և ամենաստոր կերպով Անհուշ բանտը նետելով՝ վերջ դրեց նրա կյանքին։

Հայ թագավորները, որ այս լարված իրադրության մեջ աշխատում էին որոշ հավասարակշռություն պահպանել Պարսկաստանից և Բյուզանդիայից սպառնացող վտանգի դեմ, միաժամանակ սաստել հայ նախարարությունների պառակտողական կենտրոնախույս ձգտումները, ինչպես և սահմանափակել հետզհետե զորացող եկեղեցու իրավունքները, գտնվում էին դժվարին կացության մեջ։ Եվ եթե այդ բարդ պայմանների առաջին զոհը եղավ Արշակ 2-րդը, ապա նրա որդի Պապ թագավորն էլ դավադրաբար սպանվեց բյուզանդական արքունիքի մերենայությունների հետևանքով։

Սակայն 4-րդ դարի ողբերգությունների շարանը ավարտվում է մի առավել մեծ ողբերգությամբ, երբ Արևելքի և Արևմուտքի տերությունները, արդեն ոչ թե անջատ-անջատ, այլ իրար ձեռք տված՝ Հայաստանը բաժանում են երկու մասի և ենթարկում իրենց տնօրինությանը։ Նրանց նպատակն էր այդ ձևով, մասնատված վիճակում վերացնել Հայաստանի ինքնուրույնությունը և աստիճանաբար ասիմիլյացնել հայ ժողովրդին։

Եվ իսկապես, Արևմտյան Հայաստանում՝ շատ շուտով, իսկ Արևելյան Հայաստանում մի քիչ ավելի ուշ՝ 428 թվին վերացնում են հայկական պետականությունը, երկիրը լցնում հույն քահանաներով և պարսիկ մոգերով, որոնք, ոչ առանց մի քանի հեղինակավոր նախարարությունների օժանդակության, պետք է նպաստեին հայերի հունացմանը և պարսկացմանը։

Հայ ժողովրդի ինքնությանը սպառնացող և հետզհետե կուտակվող ու սաստկացող այդ մոլեգին ամպերի ահեղ ամպրոպի ու որոտի միջավայրում, հայ ժողովրդի ծոցից, ինչպես վահանը եղեգնի փողից, դուրս եկավ մի նոր վիշապաքաղ ուժ՝ արևային Մեսրոպ Մաշտոցը, որն իր ջերմությամբ և իր լույսով ցրեց շրջապատի խավարն ու սառնությունը, լույս տվեց հայ ժողովրդին, ջերմացրեց նրա հոգին հայրենասիրության ու ազգային գիտակցության անշեջ հրով։

* * *

Փոթորկալից ու օրհասական 4-րդ դարը պետք է դներ ժամանակի բոլոր կենսական հարցերի ելքը, պետք է ծներ մի այնպիսի համապարփակ հանճար, որը կարողանար մարմնավորել ժողովրդի, հայրենիքի, պետության ու եկեղեցու բոլոր հոգևոր ուժերը, միավորեր նրանց և դներ նպատակասլաց անսայթաք հունի մեջ։ Եվ նա ծնվեց՝ ժամանակի մեծագույն մարդը, հայ հանճարի անկրկնելի դրսևորումը՝ Տարոնցի Մեսրոպ Մաշտոցը։

Մեսրոպ Մաշտոցը 4-րդ դարի հարապատ ծնունդն էր ու նրա նվիրական բաղձանքների, կենսական պահանջների արտահայտիչը։ Մեսրոպի հանճարը դարձավ իր ժամանակի բոլոր առաջադեմ ու հայրենաշեն ուժերի բախտորոշ և հուժկու կիզակետը. ծնված լինելով ժողովրդի ծոցում, գյուղական միջավայրում՝ նախ իրրև զինվորական գործիչ նա մոտիկից շփվեց հայ զինվորականու-

թյան հետ և ծանոթացավ նրա վարքուբարքին ու հոգեբանությանը, ապա անցնելով պետական պաշտոնի հայ արքունիքում՝ տեսավ, թե ինչ լարված ու օրհասական մթնոլորտ է իշխում այնտեղ, ուր թագավորի ու պետության գոյությունը կախված է պարսից արքունիքի քմահաճույքից. այնուհետև իրրև միայնակյաց ու հոգևոր քարոզիչ նա Հայաստանի տարբեր գավառներում առավել խոր ճանաչեց ժողովրդի անմխիթար վիճակը, որը նոր կրոնին անհաղորդակից, հին հավատալիքներին գերի, բայց նոր կրոնի հարկերի լրացուցիչ բեռան տակ՝ անտարբեր էր դարձել պետական ու եկեղեցական անցուդարձերին։

Այս բոլորը իրար հետ համեմատելով ու կշռադատելով՝ երկարամյա դեգերումներից ու հոգեկան տվայտանքներից հետո Մեսրոպը հանգեց այն միակ ճիշտ եզրակացության, որ երկրին ու ժողովրդին հարկավոր է ներքին, հոգևոր մի հուժկու գործոն, հայրենասիրական ոգևորության մի նոր ջերմ աղբյուր, հայրենիքի զորական ուժերին ու կենտրոնախույս նախարարներին միավորող մի հոգևոր ազդակ, այն է՝ ազգային ինքնաճանաչման բարձր գիտակցականություն, հայրենանվեր սխրագործությունների արիուն ոգի, որ կարող էր ստեղծվել միայն մայրենի լեզվով գիր ու գրականություն ունենալու ճանապարհով։ Եվ նա իր ամբողջ կյանքը նվիրեց այդ գաղափարի փայլուն իրականացմանը՝ հիմնադրելով հայոց գրերն ու հայ դպրությունը։

Լինելով չորրորդ դարի ծնունդն ու արտահայտությունը՝ Մեսրոպ Մաշտոցը իր հերթին դարձավ հայ ժողովրդի 5-րդ դարի մտավոր ու հոգեկան ողջ շարժման՝ ուսումնական-դպրոցական կյանքի, թարգմանական ու ինքնուրույն գրականության ստեղծման, հեթանոսության դեմ ծավալված կռվի, ազգային ինքնության պահպանման համար մղվող ողջ պայքարի, ազգային գիտակցության մեծ վերելքի գլխավոր ոգեշնչողն ու առաջնորդը։

Հայ գրերի գյուտը և հայկական դպրության սկզբնավորումը, որ տեղի ունեցավ 5-րդ դարի արշալույսին, մի սովորական, թեկուզ և համազգային նշանակություն ունեցող երևույթ չէր և ոչ նույնիսկ սոսկ հոգևոր ու մշակութային հեղափոխություն։ Դա հայ ժողովրդի հետագա ողջ կյանքի, նրա պատմական ճակատագրի համար վճռական նշանակություն ունեցող բախտորոշ իրադարձություն էր, որի արմատներն ու հիմքերը գալիս էին մոտ 300 տարվա նախընթաց պատմությունից, իսկ ճյուղերն ու պտուղը հասնում են մինչև մեր օրերը։

Ժողովուրդների կյանքում եղել են այնպիսի խոշոր իրադարձություններ, որոնք հիշվում և գնահատվում են որպես միայն պատմական արժեք ունեցող երևույթ՝ ինքնավարտ, միանգամյա, էպիզոդիկ, առանց հետագա զարգացման ու ծավալման, առանց հարատևող հետևանքների։ Այդպիսին են եղել, ասենք, արաբական արշավանքները Հայաստան և նրանց վերացումը, թաթարական ներխուժումը Ռուսիա և դրա հաղթահարումը, Ալեքսանդր Մակեդոնացու տիեզերական էքսպանսիան և այլն։ Սակայն եղել են և այնպիսի իրադարձություններ, որոնք սաղմնավորվել ու հասունացել են դարերի ընթացքում, վճռական ու բախտորոշ նշանակություն ունեցել տվյալ ժողովրդի հետագա ողջ ճակատագրի համար և նշել նրա պատմության ընթացքի հետագա դարավոր ուղեծիրը։ Դրանք ներքին ուժերի անընդմեջ փոխակերպումներով զարգացող հարաձիգ պրոցես են, որ կարելի է համեմատել բնագիտությունից ծանոթ շղթայական ռեակցիայի հետ, որը մեկ սկսվելով՝ առաջընթաց շարժմամբ հասնում է մինչև ավարտը։

Հայ ժողովրդի համար այդպիսի շղթայական ռեակցիա է եղել Արևելքի և Արևմուտքի երկու հզոր տերությունների միջև, նրանց հարատև ազրեսիայի

պայմաններում ազգային ինքնուրույնությունը պահպանելու ներքին անհաղթահարելի մղումը, որ սկսվել էր Տիգրան Բ-ի ազգահավաք, կենտրոնաձիգ գործունեությամբ, շարունակվել 4-րդ դարի սկզբի այսպես կոչված դարձով՝ քրիստոնեության որդեգրմամբ, ամրապնդվել ու բորբոքվել 5-րդ դարի սկզբին հայ գրերի ու հայկական դպրության սկզբնավորմամբ, սրբագործվել նույն դարի երկրորդ կեսի Վարդանանց և Վահանանց հերոսական ճակատամարտերով, որից հետո ո՛չ ինքնուրույն պետականության բացակայությունը, ո՛չ կրոնական եկեղեցական տարրնթացությունները ու երկպառակությունները, ո՛չ արաբական, մոնղոլական ու թյուրք-թաթարական արշավանքները, ո՛չ հայերի հայրենազրկումն ու տարագնացությունը աշխարհի տարբեր կողմերը այլևս չպիտի կարողանային վերացնել հայ ժողովրդի ինքնուրույնության ոգին, նրա ազգային գիտակցությունն ու հոգևոր մշակույթը, որովհետև նա արդեն ձևավորվել էր անխորտակելի մի ամբող, իր մայրենի գիրն ու գրականությունը՝ տոգորված հայրենասիրության անմար հրով։

Մեսրոպի ստեղծած հայ գիրը և նրա հիմնադրած հայրենախոս գրականությունը ավելի քան 1500 տարի լուսատու փարոս, կենտրոնաձիգ ուժ են եղել աշխարհով մեկ սփռված հայության հատվածների համար, նրանց միշտ կողմնորոշել են դեպի Մայր-հայրենիքը, նրանց հայացքը միշտ դամել Այրարատ դավառին, որի ծոցում՝ Օշական գյուղում իրրև մի անմահ խորհրդանիշ հանդչում է մեր ազգային հանճարի սրբազան աճյունը։

* * *

Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը մեզ հայտնի են նրա անմիջական աշակերտ Կորյունի գրած կենսագրությունից, որ կոչվում է «Որանելի մարդու՝ մեր թարգմանիչ սուրբ Մեսրոպի վարքի ու մահվան պատմություն» կամ կարճ՝ «Վարք Մաշտոցի», և Մեսրոպի աշակերտ Մովսես Խորենացու, ինչպես և Ղազար Փարպեցու լրացումներից։

Կորյունի այդ երկը, որ Մեսրոպյան տասերով գրված առաջին ինքնուրույն ստեղծագործություններից մեկն է, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը նկարագրող կենսագրական խանդավառ ներբողյան է՝ աշակերտի ջերմեռանդ զգացումներով լի՝ իր պաշտելի ուսուցչի հիշատակին։ Մեսրոպի փոքրկուն կյանքի ու բազմարդյուն գործունեության վերաբերյալ տվյալները գլխավորապես մեզ հայտնի են հենց Կորյունի այդ գողտրիկ գրքից, որի մեջ հեղինակը, շատ գուսպ ու համեստ, տալիս է մի երկու տեղեկություններ նաև իր մասին։

Կորյունը եղել է Մեսրոպի մերձավոր աշակերտը՝ Սահակ կաթողիկոսի տեղապահ Հովսեփի, Եղնիկ Գողբացու, Զենոբ Գրեցի և այլ արժանավոր գործիչների կրտսեր ընկերակիցը՝ Վաղարշապատում Մեսրոպի բացած առաջին դպրոցի սաներից մեկը, որոնք հետո ուսուցչության են ուղարկվել Հայաստանի գանազան գավառները։

Ճիշտ է, Կորյունի այդ գիրքը՝ «Վարք Մաշտոցի», շատ հետու է այսօրվա իմաստով կենսագրություն լինելուց և իր կառուցվածքով ու շարադրման ոճով հիշեցնում է եկեղեցու համար նահատակված սրբերի վկայաբանություններն ու վարքագրությունները, բայց նույնիսկ այդ էլ մեծ սխրագործություն ու հանգրգռություն էր այն ժամանակվա համար, և ահա թե ինչու։ Նորաստեղծ հայ գիրն ու գրությունը, դրա շնորհիվ իրականացված հայերեն ժամերգությունը եկե-

դեցիներում, ժողովրդի մեջ բարձրացած ազգային գիտակցության ու հայրենասիրության խանդավառությունը, երկրի բոլոր գավառներում բացված հայալեզու դպրոցներն ու ուսումնարանները, հայրենասեր ու հայերենախոս բարձր մտավորականության անընդհատ աճումը չէին կարող հանդուրժելի համարվել ո՛չ Պարսկաստանի համար, ո՛չ Բյուզանդիայի, և ո՛չ էլ ասորի և հույն հոգևորականության, որը ստիպանարար զրկվում էր իր մենաշնորհ վիճակից, կորցնում իր ազդեցությունը, որովհետև ասպարեզ էր եկել կյանքի բոլոր ոլորտները թափանցող հայագիր լեզուն։ Այդ բոլորի պատճառը համարում էին վերջին Արշակունի թագավոր Վռամշապուհին, վերջին Պարթև կաթողիկոս Սահակին և մանավանդ Տարոնցի շինական Մեսրոպին. և ահա, այդ Մեսրոպի մահից հազիվ տասը տարի անց, երբ այլևս ո՛չ Վռամշապուհ կար և ո՛չ Սահակ, երբ պարսից արքունիքը սկսել էր իրականացնել հայերի ձուլման իր ծրագիրը, Վարդանանց պատերազմի փոթորկուն նախօրյակին Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը մատենագրելը պետք է դրդեր թե՛ Բյուզանդիային ու Պարսկաստանին, թե՛ երկրի ներսի հետադիմական ուժերին ու օտարազգի հոգևորականներին։

Կար և մի ուրիշ դժվարություն, որ շատ լավ գիտակցում էր ինքը Կորյունը. այդ ժամանակ ընդունված չէր և աննախօրինակ դեպք պետք է լիներ քաղաքացիական գործչի, կուլտուրական-կրթական ընդավառի նորարարի կենսագրության գրելը, իսկ Մեսրոպ Մաշտոցը նախ և առաջ և գլխավորապես այդպիսի գործիչ էր. նրա կրոնական-քարոզչական գործունեության մեջ, որքան էլ Կորյունն աշխատում է երկար ու բարակ պատմել դրա մասին, որպեսզի հակառակորդներին չդրդելու նպատակով ստվերի տակ թողնի Մեսրոպի քաղաքացիական, կուլտուր-տրեկերական գործունեությունը։ Մեսրոպի կրոնական-քարոզչական գործունեության մեջ, կրկնում եմ, չկա մարտիրոսական որևէ քայլ կամ սխրագործություն, որևէ հալածանք, խոշտանգում, նահատակություն և այլն, որն իրավունք տար գրելու նրա վարքը կամ վկայաբանությունը ըստ քրիստոնեական եկեղեցում ընդունված կարգի։

Դրա համար էլ, և այդ պատասխանատվության գիտակցությամբ, իր մատյանի հենց սկզբում Կորյունը գործը ներկայացնում է իբրև կաթողիկոսական տեղապահ Հովսեփի առաջադրություն և Մեսրոպի այլ աշակերտների՝ իր ընկերակիցների թելադրանք։

«Եւ առաւել քան զկար մեր, զրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել»[1]։

(Եվ այդ մեր ուժերից վեր էր. բռնադատվելով եկած հրամանից՝ շտապով և առանց ուշացնելու գրեցի այդ առաջադրանքը)։

Սակայն պաշտոնական այդ հրամանն էլ քիչ համարելով իր գործն արդարացնելու համար՝ Կորյունն այնուհետև առաջ է քաշում այն հարցը, թե կարելի՞ է արդյոք գրել «կատարյալ մարդկանց» վարքը և Աստվածաշնչից բերվող բազմաթիվ օրինակներով համոզում իր ընթերցողներին, այո՛, կարելի է։

Կորյունի այս «կատարյալ մարդիկ» արտահայտությունը, որքան ինձ հայտնի է, հայ բանասիրության մեջ առանձին ուշադրություն չեն դարձրել, և պրոֆ. Արեղյանն էլ նույնությամբ պահպանում է Կորյունի՝ իր աշխարհարար թարգմանության մեջ։ Ի՞նչ է հասկանում Կորյունը «կատարյալ մարդիկ» ասելով, ին-

[1] «Վարք Մաշտոցի», էջ 22—24։

չո՞ւ Մեսրոպին դասում է «կատարյալ մարդկանց» շարքը և չի ասում, թե կարելի՞ է արդյոք գրել «սուրբ մարդկանց» վարքի մասին։

Ճիշտ է, իր գրքի մեջ նա մի քանի անգամ Մեսրոպի համար գործածում է «սուրբ» բառը, եթե իհարկե դա հետագա հավելում չէ, բայց այս հատվածի մեջ նա նկատի ունի ոչ թե սրբությունը, կրոնավորական-քարոզչական ասպարեզը, այլ մեծագործություն, առաքինություն, հերոսություն, այսինքն սարդնապետ կատարելություն։ Այդ հաստատվում է հենց նրանով, որ Աստվածաշնչից իրրև «կատարյալ մարդկանց» օրինակ բերված անձերից համարյա ոչ մեկը սուրբ չէ և ոչ մեկը քրիստոնեական եկեղեցու գործիչ և մանավանդ նահատակ չէ. դրանք են՝ Ադամի որդի Աբելը, Ենովք և Նոյ նահապետները, Բաբելոնի հիմնադիր հսկա Ներրոդը թագավորը, առասպելական հերոս Սամսոնը, հրեաների թագավոր Դավիթը և այլն՝ բոլորն էլ աշխարհական մարդիկ, որոնք աչքի են ընկել իրենց այս կամ այն առաքինությամբ, աշխարհիկ մեծագործությամբ կամ հերոսությամբ։ Պատահական չէ, որ Կորյունը այստեղ չի հիշատակում Հռոմի, Բյուզանդիայի կամ Ասորիքի վարքագրական գրականության և ոչ մի հերոսի, նահատակի կամ սրբի անուն։ Այդ նշանակում է, որ Կորյունը իրավացիորեն իր ուսուցչի մեջ տեսնում ու գնահատում էր «կատարյալ մարդուն», ժամանակի մեծագույն գործչին, և ոչ թե քարոզչի ու հոգևորականի։

Սակայն Կորյունի սրտի և մտքի ճշմարտացի թելադրանքը սքողված է ժամանակի իշխող աշխարհայացքի կրոնական շղարշով։

Կորյունի այդ մատյանը իր անգնահատելի ու վավերական տվյալներով, ժամանակակցի ու ականատեսի կենդանի հուշերով, փարթամ ու խաղացիկ լեզվով, վառ պատկերներով ու համեմատություններով մեր հնագույն մատենագրության ոսկեղեն գանձերից մեկն է՝ մեսրոպատառ հայ գրականության անդրանիկ ինքնուրույն ստեղծագործությունը, որի հեղինակի անունը հավերժ անրաժանելի կմնա Մեսրոպ Մաշտոցի անունից։

Հայ գիրը դարձավ հայ ժողովրդի պատմական բախտի ուղեկիցը։ Այդ գրերով հայ ժողովուրդը ստեղծեց իր մեծ կուլտուրան՝ ստեղծեց միջնադարի գունագեղ պոեզիան, Սայաթ-Նովայի երգերը, Արովյանի «Վերքը», 19-րդ դարի հայ հարուստ գրականությունը։ Երկար դարերի ընթացքում մեսրոպյան գիրը բռնեց իր փայլուն քննությունը։ Մեսրոպյան գրերի համաժողովրդական նշանակությունը առանձնապես ամրողջական արտահայտվեց մեր ժողովրդի Հոկտեմբերյան նվաճումներից հետո։ Հայ ժողովուրդը դառնալով իր երկրի տերը, իր բախտի տնօրինությունը վերցնելով իր ձեռքը, Մեսրոպատառ գիրը դարձրեց իր նոր հասարակության, իր նոր սոցիալիստական պետականության զարգացման ու ամրապնդման, համաշխարհային մշակույթի բոլոր բնագավառներում իր պատշաճ բաժինը ներդնելու հզոր միջոց։ Մեսրոպատառ գրերով ստեղծվեց հայ ժողովրդի նոր, սոցիալիստական կուլտուրան, սոցիալիստական ռեալիզմի գրականությունը։ Թարգմանվեցին աշխարհի տարբեր լեզուներով ստեղծված գրականության լավագույն նմուշները։ Այդ գիրը դարձավ մատչելի ողջ հայ ժողովրդի համար, մեկընդմիշտ վերացավ անգրագիտությունը։ Հայ ժողովուրդն այսօր Մեսրոպագիր հայերենով զարգացնում է իր մշակույթը և գնում դեպի կոմունիզմի իրականացումը։ Այսօր, 1600 տարի անց, հայ ժողովուրդը տոնում է իր մեծ գավակներից մեկի, անմահ Մաշտոցի ծննդյան հոբելյանը և նրան ըստ արժանվույն մատուցում իր հարգանքը, անսահման սերն ու երախտագիտությունը։